ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МЕРИЯ МРГАСТАНА

---

հեռ. /094/ /80-53-63/

/0231/ /6-38-10/

«1» 30 01 2013թ.

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով Ձեզ ենք ներկայացնում Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 21 հունվարի 2013թ. կայացած թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր՝23թերթ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 805-13
30 01 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հունվարի 2013 թվական թիվ 1

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 21-ի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Աստրյան
Ա. Աստրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թվականի հունվարի 21
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ

## ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ 2012Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

7. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«21» հունվարի 2013 թվականի թիվ 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի կողմից ստեղծված գույքագրման հանձնաժողովի ակտը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Ա. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ի. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թվական հունվարի 21
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի
ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Կոդիր 6 էջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2012 թվական N 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 32-ի առաջին մասի 17-րդ կետով

Որոշում եմ

1.Անցկացնել՝ ամենամյա գույքագրում:
2.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
3.Հանձնաժողովի նախագահին գույքագրման ավարտի մասին զեկուցել՝ համայնքի ղեկավարին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 24
գ. Մրգաստան

Հավելված
Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի
գյուղական համայնքի ղեկավարի
2012թ. դեկտեմբերի 24-ի թիվ 5
որոշման

ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Յովակիմյան /համայնքի ղեկավարի տեղակալ/

Հանձնաժողովի անդամներ՝

Սուսաննա Դարիբյան /աշխատակազմի քարտուղար/

Աշոտ Հարությունյան /առաջատար մասնագետ/

Գայանե Եղիազարյան /առաջին կարգի մասնագետ/

Աննա Հակոբյան /առաջին կարգի մասնագետ/

Արայիկ Կարապետյան /առաջատար մասնագետ/

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ /ԳՈՒՅՔ/

1.Տրանսֆորմատորի շենք

2.մսուր մանկապարտեզի շենք

3.կուլտուրայի տուն

4.սեղան

5.աթոռ

6.համակարգիչ՝ 2 հատ /SAMSUNG/

7.Տպիչ՝ 1 հատ PASHER 3100MFP

8.երկաթյա պահարան-2հատ

9.ավտոմեքենա-1հատ VAZ 21074

10.գրադարանի շենք

11.Printer SAMSUNG ML-1675 31.05.2012թ. 45 000դրամ:

# ԳՐԱԴԱՐԱՆ

1.Գեղարվեստական գրականություն-800

2.մասնագիտական գրականություն-150

3.արկածային գրականություն-300

4.ռուսական գրականություն-250

5.մանկական գրականություն-100

6.պատմա-մշակույթային-100

7.դասական-200

8.Մարքս, Էնգելս, Լենին-150

9.արտասահմանյան գրականություն-250

10.այլ անուն գրքեր-200

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ
ԲՈՒԺԿԵՏԻ ԳՈՒՅՔ

1.Պահարան-2հատ

2.գրասեղան-2հատ

3.աթոռ-10հատ

4.հետազոտման մահճակալ-1հատ

5.մանկական հետազոտման սեղան-1հատ

6.բազմոց-1հատ

7.լրագրասեղան-1հատ

8.շերտավարագույր-4հատ

9.ցուցատախտակ-2հատ

10.հայելի և կախիչ-1հատ

11.լվացարան-2հատ

12.ծորակ-2հատ

13.էլեկտրական տաքացուցիչ-2հատ

14.ավտոմատ անջատիչ-2հատ /63Ա/

15.ջրի պոմպ-1հատ

16.Նորածնի կշեռք-1հատ

17.մանկական ստետոֆոնենդոսկոպ-1հատ

18.գլխի շրջագիծը չափելու ժապավեն-1հատ

19.ճնշման չափիչ-1հատ

20.մեծահասակների հասակաչափ-1հատ

21.ջերմաչափ-6հատ

22.զուգարանագոգ-1հատ

ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ /ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ/

1.Գյուղատնտեսական նշանակության՝ 142.27

2.Բնակավայրերի՝ 60.4

3.Այլ հողատեսքեր՝ 43.45

4.Արդյունաբերական ընդերքօգտագործման
և այլ նշանակության օբյեկտների՝ 8.92

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հունվարի 2013 թվական թիվ 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 11-ի երկրորդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2013թ. հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թվական հունվարի 21
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ N
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| | | |
|---|---|---|
| Հունվարի 21 | ժամը 16.00 | թիվ 1 |
| Մարտի 4 | ժամը 16.00 | թիվ 2 |
| Մայիսի 7 | ժամը 16.00 | թիվ 3 |
| Օգոստոսի 22 | ժամը 16.00 | թիվ 4 |
| Հոկտեմբերի 17 | ժամը 16.00 | թիվ 5 |
| Դեկտեմբերի 6 | ժամը 16.00 | թիվ 6 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«21» հունվարի 2013 թվականի թիվ 4-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2012Թ. ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2012թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ 5կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թվականի հունվարի 21
գ. Մրգաստան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հ. Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ

# Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն՝ Ա. Թովմասյան

Հարգելի ավագանու անդամներ և հյուրեր, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2012թ. բյուջեի կատարման ընթացքի մասին տարեկան հաշվետվությունը, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել եմ պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ.

2011թ. դեկտեմբերի 5-ի համայնքի ավագանու թիվ 5/1 արտահերթ նիստում, հաստատվեց համայնքի 2012թ. բյուջեն, որը կազմված է ֆոնդային և վարչական մասից, իր մեջ ներառում է սեփական եկամուտներ և պետական բյուջեից տրամադրվող դոտացիա:

2012թ. դոտացիան կազմել է՝ 17888.7 հազար դրամ:

Համայնքի հողային տարածքը կազմում է՝ 280հա., որից վարելահող 138.99հա., այգիները կազմում են՝ 5.4հա:

Գյուղը ունի մեկ միջնակարգ դպրոց:

Գյուղում զարգացած է՝ գյուղատնտեսությունը և անասնապահությունը:

Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 13 աշխատողներից, որից 6 համայնքային ծառայողներ են:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից ապահովվել է բյուջեի արդյունքների ամփոփումը եռամսյակը մեկ անգամ, որին ավագանին տվել է իր գնահատականը:

Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը:

«Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից տրվել է հանձնարարականներ, գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին կապված անձնակազմի կառավարման, ստացվող թղթաշրջանառության, ինչպես նաև բնակչության հետ տարվող աշխատանքների վերաբերյալ:

Իմ հանձնարարությամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները՝

Համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել և վարվել է համայնքի ավագանու 8 նիստ, որից 4 հերթական, 4 արտահերթ:

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ:Ընդունելության

եկած քաղաքացիների դիմումներին և բանավոր հարցադրումներին իմ և ավագանու անդամների, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է սպառիչ պատասխան՝ սահմանված ժամկետներում:
Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորություններ:
Հաստատվել է՝ համայնքի զարգացման քառամյա ծրագիրը:
Քանի որ, հաշվետու ժամանակաշրջանում իրավասության մեջ մտավ նորընտիր ավագանին, անհրաժեշտություն առաջացավ հաստատելու աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, համայնքի բյուջեն, համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը,ինչպես նաև սահմանվեց համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:
Այս տարի առաջին անգամ որոշում է կայացվել աղբահանության գծով շնչահարկի կիրառման մասին, որը կիրականացնենք 2013թ.:
Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից վերահսկվել է հարկերի և տուրքերի հավաքագրման աշխատանքները.
Հողի հարկը տարվա կտրվածքով կազմում է 4.5մլն. դիմաց, հավաքագրվել է 4503.500 դրամ 101 տոկսով:
Գույքահարկ շենք շինությունների համար նախատեսված՝ 150.0հզ. դիմաց, կատարվել է հավաքագրում 33.0 hզ. դրամ, 22 տոկոսով:
Փոխադրամիջոցի գույքահարկի համար 1 000 000 դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 707 600 hզ. դրամ, 70 տոկոսով:
Տեղական տուրքեր և վճարներներ 70.0 hզ. դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 31.5 hզ. դրամ 45 տոկոսով, քանի որ համայնքի տարածքում աշխատել է երեք սպասարկման կետ:
1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:
2.Ընդունելության եկած բնակիչներին տրվել է դրամական օգնություն՝ 1 980 000 /մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար / դրամ:
3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝ կատարվել են հետևյալ աշխատանքները.
3.1Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական երկու անգամ, կնքված պայմանագրի հիման վրա էջմիածնի քաղաքապետարանի բնակ-կոմունալ վարչության հետ, ծախսը կազմել է 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ:
3.2Ճանապարհների փոսալցման աշխատանքների վրա ծախսվել է 73 000 /յոթանասուն երեք հազար/ դրամ:
3.3Ոչ հարկային եկամուտները կազմել է՝ 59 900 /հիսունինը հազար ինը հարյուր/ դրամ:
3.4 Համայնքում գործող գերեզմանատան աշխատանքները իմ կողմից վերահսկվում են:
Սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին:
Հողօգտագործման բնագավառում՝
Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:

Գյուղացիներին մատչելի գներով բաժանվել է 340 պարկ պարարտանյութ, 50կգ. տարողությամբ:

Դաշտամկների դեմ կազմակերպվել է քիմիական պայքար՝ ցինկի ֆոսֆիդով, աշխատանքները իրականացվել են կենտրոնացված ձևով, 90հա. վրա ցինկի ֆոսֆիդի ծախսը կազմել է 10.8կգ.:

Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում է գյուղապետարանի աջակցությանը:

Մարտի 8-ին նվիրված, Վերջին զանգին նվիրված և Հանրապետության տոնին նվիրված միջոցառումները աջակցություն է ստանում գյուղապետարանի կողմից:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ նիվիրված Ամանորի և Սուրբ ծննդյան օրվան:Համայնքի 0-14տարեկան երեխաներին բաժանվել է ամանորյա նվերներ:

Տեղեկատվության բնագավառում ծախսվել է՝ 82 000 /ութսուն երկու հազար/ դրամ, թերթերի և լրատվության այլ միջոցների վրա:

Գյուղի երիտասարդ ընտանիքները ևս արժանացել են գյուղապետարանի աջակցությանը, ծախսը կազմել է՝ 105 000 /հարյուր հինգ հազար/ դրամ:

Գյուղում արդեն ավանդույթ է դարձել գյուղի կենսաթոշակառու կանանց և աշխատող կանանց մասնակցությամբ մարտի 8-ի տոնակատարությունների կազմակերպումը, միջոցառման ժամանակ հանձնվում են նվերներ:

Գյուղատնտեսության բնագավառում՝ աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը՝ տրվել է համապատասխան տեղեկանքներ, որպեսզի գյուղացին կարողանա անարգել տեղափոխի իր բերքը:

Այսքանը կատարված աշխատանքների մասին:

Սակայն գյուղը ունի հիմնախնդիրներ, որոնք ես նախատեսել եմ լուծել հետագա 4 տարիների ընթացքում և որոնք առկա են համայնքի զարգացման քառամյա ծրագրում, նշեմ մի քանիսը՝

Առաջնահերթության խնդիր ունի համայնքի մանկապարտեզը, որի շենքը ժամանակին բնակեցվել է անտուններով և այժմ գտնվում է անմխիթար վիճակում:

Գյուղը չունի զվարճանքի որևէ վայր, որտեղ իրենց հանգիստը կարող է անցկացնել երիտասարդությունը:

Առաջնահերթ եմ համարում սպորտդահլիճի կառուցումը, քանի որ ունենք ամառային մարզադաշտ, որտեղ երեխաները զբաղվում են ֆուտբոլ սպորտաձևով:Այդ նպատակով գյուղապետարանը ամառային սեզոնի համար ունի սպորտ կազմակերպիչ, որի աշխատավարձը ամիսների ընթացքում կազմում է 192 500 /հարյուր իննսուն երկու հազար հինգ հարյուր/ դրամ, մնացած ամիսներին երեխաները ոչ մի տեսակ զբաղմունք չունեն:

Ցավոտ կողմ է նաև տրանսպորտի հարցը, քանի որ հասարակական տրանսպորտի որևէ տեսակ գյուղ չի մտնում, պատճառը ճանապարհների անմխիթար վիճակն է:

Հետագա անելիքների մասին, մանրամասն շարադրվել է 2012-2016թ.թ. համայնքի զարգացման քառամյա ծրագրում:

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հունվարի 2013 թվական թիվ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 69-ի առաջին մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2012թ. չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Աստրյան
Ա. Աստրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թվական հունվարի 21
գ. Մրգաստան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հ. Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄ

# Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ-Ի ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԲՅՈՒՋԵՅԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն՝ Ա. Թովմասյան

Հարգելի ավագանու անդամներ և հյուրեր, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2012թ. չորրորդ եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ինձ ընձեռնված լիազորություններով.

Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը:Իմ հանձնարարությամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները՝

Համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստի ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը:

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ:Ընդունելության եկած քաղաքացիների դիմումներին և բանավոր հարցադրումներին իմ և ավագանու անդամների, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է սպառիչ պատասխան՝ սահմանված ժամկետներում:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով հրավիրվել և վարվել է ավագանու 2 նիստ, մեկը հերթական մյուսը՝ արտահերթ:

Հաստատվել է՝ համայնքի զարգացման քառամյա ծրագիրը:

Քանի որ, հաշվետու ժամանակաշրջանում իր իրավասության մեջ մտավ նորընտիր ավագանին, անհրաժեշտություն առաջացավ հաստատելու աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, համայնքի բյուջեն, համայքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը,ինչպես նաև սահմանվել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

Այս տարի առաջին անգամ որոշում է կայացվել աղբահանության գծով շնչահարկի կիրառման մասին, որը կիրականացնենք 2013թ.:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից վերահսկվել է հարկերի և տուրքերի հավաքագրման աշխատանքները.

Հողի հարկը չորրորդ եռամսյակի կտրվածքով կազմում է 1125.0 հզ. դիմաց հավաքագրվել է՝ 3242.1 հզ. դրամ:

Գույքահարկ շենք շինությունների համար նախատեսված՝ 37.5հզ. դիմաց, կատարվել է հավաքագրում 31.8հզ. դրամ:

Փոխադրամիջոցի գույքահարկի համար 250.0հզ. դրամի դիմաց հավաքագրվել է 350.2 հզ. դրամ:

Տեղական տուրքեր և վճարներներ 17.5հզ. դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 4.5 հզ. դրամ:

Վարձակալական հողի հարկ՝ 75.0 հզ. դրամի դիմաց, հավաքագրվել է 4.0 հզ. դրամ:

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

2.Չորրորդ եռամսյակի ընթացքում ընդունելության եկած 61 բնակիչներից 54-ին տրվել է դրամական օգնություն՝ 795.0 /յոթ հարյուր իննսուն հինգ հազար / դրամ:

3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝ կատարվել են հետևյալ աշխատանքները.

3.1Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական երկու անգամ, կնքված պայմանագրի հիման վրա էջմիածնի քաղաքապետարանի բնակ-կոմունալ վարչության հետ:

3.2 Համայնքում գործող գերեզմանատան աշխատանքները իմ կողմից վերահսկվում են:

Սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին:

Հողօգտագործման բնագավառում՝

Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:

Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականցվող միջոցառումները արժանանում է գյուղապետարանի աջակցությանը:

Գյուղատնտեսության բնագավառում՝ աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը՝ տրվում են համապատասխան տեղեկանքներ, որպեսզի գյուղացին կարողանա անարգել տեղափոխի իր բերքը:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ նվիրված Ամանորի և Սուրբ ծննդյան օրվան:Համայնքի 0-14տարեկան երեխաներին բաժանվել է ամանորյա նվերներ:

Այսքանը չորրորդ եռամսյակի ընթացքում, բյուջեի կատարման ընթացքի մասին:

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հունվարի 2013 թվական թիվ 6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ միջոցառումներ կազմակերպելու մասին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հատկացնել՝ 60.000 /վաթսուն հազար/ դրամ, տյառնընդառաջի տոնին նվիրված միջոցառում կազմակերպելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ (0)դեմ (0) ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թվական հունվարի 21
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ
«21» հունվարի 2013 թվական թիվ 7

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին, դրամական աջակցություն ցուցաբերելու նպատակով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արարատ Սվերդլովի Մարգարյանին տատիկի մահվան կապակցությամբ հատկացնել՝ հիսուն հազար /50.0/ դրամ:

Ավագանու անդամներ 5կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Ս. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. հունվարի 21
գ. Մրգաստան